



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՈՐՈՇՈՒՄ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի հավելվածը հանդիսացող և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.10.2020թ. թիվ 21/9-Լ որոշմամբ հաստատված Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 4-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Սահմանել 2022թ. գարնան որակավորման քննության կազմակերպման և անցկացման ժամանակացույցը, այն է՝

- 1.1. որակավորման քննություն հանձնելու դիմումների ընդունման ժամկետն է՝ 19.05.2022 թվականից մինչև 31.05.2022 թվականը ներառյալ, աշխատանքային օրերին ժամը 11.00-ից 17.00-ը.**
- 1.2. քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հավակնորդների համար որակավորման քննությունն անցկացվելու է 07.06.2022 թվականին, ժամը 09:00-ից՝ ՀՀ, ք. Երևան, Ջաքյան 7-2 հասցեում.**
- 1.3. քրեաիրավական մասնագիտացմամբ հավակնորդների և հատուկ դիմորդների համար որակավորման քննությունն անցկացվելու է 08.06.2022 թվականին, ժամը 09:00-ից՝ ՀՀ, ք. Երևան, Ջաքյան 7-2 հասցեում:**

2. Սահմանել, որ որակավորման քննություն հանձնելու ժամի մասին հավակնորդները տեղեկացվելու են դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող ծանուցմամբ:

3. Սույն որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝

Սիմոն Բաբայան

Որոշում N 02-Լ
18 մայիսի 2022թ.
ք. Երևան